

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2017 թվականի հունիսի 23-ի
N 40 որոշմամբ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության

**«Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման
միջոցներին ներկայացվող պահանջների մասին»**

(ԵԱՏՄ ՏԿ 043/2017)

I. Կիրառման ոլորտը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է մարդու կյանքը և (կամ) առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը հրդեհներից պաշտպանելու նպատակով, ինչպես նաև սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու համար:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ, համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) տարածքներում կիրառման և կատարման համար պարտադիր՝ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այդ միջոցների մակնշմանը ներկայացվող պահանջները՝ անդամ պետությունների տարածքներում դրանց ազատ տեղաշարժն ապահովելու համար:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների վրա, որոնք նախատեսված են հրդեհը կանխելու, դրա առաջացման ռիսկը նվազեցնելու, հրդեհի զարգացումը և դրա վտանգավոր գործոնների տարածումը սահմանափակելու, հրդեհը մարելու, հրդեհից մարդկանց փրկելու, մարդու կյանքը

և (կամ) առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը հրդեհից պաշտպանելու, ինչպես նաև հրդեհի հետևանքով վնաս հասցնելու և (կամ) բացասաբար անդրադառնալու ռիսկը նվազեցնելու համար:

4. Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ցանկը, որոնց վրա տարածվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները, ներառյալ համապատասխանության հավաստման ընթացակարգերը, բերված է սույն Տեխնիկական կանոնակարգի հավելվածում:

5. Այն դեպքում, երբ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նկատմամբ ընդունվել և ուժի մեջ են մտել Միության (Մաքսային միության)՝ տվյալ միջոցների նկատմամբ պահանջներ սահմանող այլ Տեխնիկական կանոնակարգեր, ապա հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման այդ միջոցները պետք է համապատասխանեն Միության (Մաքսային միության)՝ ուժի մեջ մտած բոլոր Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

II. Հիմնական հասկացությունները

6. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

շնչառական ապարատ՝ շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության միջոց.

գծամետրային էլեկտրամոնտաժային արտադրատեսակներ՝ տարբեր երկրաչափական ձևի լայնական հատվածքով էլեկտրամոնտաժման ամրան, որը նախատեսված է մալուխների և լարերի (խողովակներ, վաքեր, տուփեր) անցկացման համար.

հրշեջ սանդուղք՝ հրդեհի մարման և բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու համար շենքերի վերին հարկեր հրշեջներին և սարքավորումները բարձրացնելու փոխադրելի միջոց, որն ըստ կառուցվածքի բաղկացած է երկու զուգահեռ ուղղահայաց աղեղալարերից, որոնք կոշտ միացված են լայնական հենարանային աստիճաններով.

հրդեհաշիջման շարժական միջոցներ՝ տրանսպորտային կամ փոխադրվող հրշեջ մեքենաներ (հրշեջ ավտոմեքենաներ, ամենագնացներ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ, գնացքներ, նավեր, շարժական

ռոբոտատեխնիկական համալիրներ, շարժիչապոմպեր, մոտոցիկլներ, քվադրոցիկլներ, տրիցիկլներ), որոնք հրդեհի մարման և վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ նախատեսված են հրդեհային ստորաբաժանումների անձնակազմի կողմից օգտագործման համար.

շարժական ռոբոտ՝ օպերատորի կողմից հեռակառավարվող հրդեհաշիջման շարժական միջոց, որը կատարում է հրդեհի մարման և (կամ) վթարային-փրկարարական աշխատանքների այլ տեսակների գործառնություններ՝ առանց վտանգավոր գոտում մարդու անմիջական մասնակցության (ներկայության).

շարժական ռոբոտատեխնիկական համալիր՝ շարժական ռոբոտի, դրա հեռակառավարման համակարգի և ռոբոտի շահագործումն ապահովելու միջոցների ամբողջություն.

հրշեջ շարժիչապոմպ՝ շարժական (կցորդային կամ փոխադրելի), անհատական շարժիչից հաղորդակով շարժիչապոմպային ագրեգատ, որը լրակազմված է հրդեհատեխնիկական սարքավորումներով.

հրշեջ պոմպ՝ հիդրավլիկ մեքենա, որը հաղորդակային շարժիչի մեխանիկական էներգիան փոխակերպում է հրդեհի մարման ժամանակ օգտագործվող հեղուկ միջավայրի հոսք ստեղծող հեղուկի էներգիայի.

կրակմարիչ նյութ՝ ֆիզիկաքիմիական այնպիսի հատկություններ ունեցող նյութ, որոնք այրումը դադարեցնելու համար թույլ են տալիս պայմաններ ստեղծել.

կրակմարիչ՝ հրդեհաշիջման հեղուկի բացթողման հաշվին հրդեհի օջախը մարելու համար նախատեսված փոխադրելի կամ շարժական սարք՝ մինչև հրդեհի օջախ այն ձեռքով տեղ հասցնելու և գործարկելու հնարավորությամբ.

հրդեհի վտանգավոր գործոններ՝ հրդեհի գործոններ, որոնց ազդեցությունը կարող է հանգեցնել մարդու կողմից վնասվածք ստանալուն, նրա թունավորմանը կամ մահվանը և (կամ) նյութական վնասի.

հրշեջ ազդարար՝ տեխնիկական միջոց, որը նախատեսված է լուսային, ձայնային, խոսքային ազդանշանի (դրանց համակցության) կամ մարդու զգայարանների վրա այլ ազդեցության միջոցով հրդեհի մասին մարդկանց ազդարարման համար.

հրդեհի օջախ՝ հրդեհի առաջացման սկզբնական վայրը.

հրդեհաշիջման առաջնային միջոցներ՝ հրդեհաշիջման միջոցներ, որոնք օգտագործվում են հրդեհի զարգացման սկզբնական փուլում դրա դեմ պայքարի համար.

հրշեջ սարքավորում՝ հրդեհաշիջման հաղորդակցության կազմի մեջ մտնող սարքավորում, ինչպես նաև այդ սարքավորման տեխնիկական սպասարկման միջոցներ.

հրշեջ ազդասարք՝ տեխնիկական միջոց, որը նախատեսված է հրդեհի պատճառով առաջացած՝ շրջակա միջավայրի ֆիզիկական պարամետրերի փոփոխությունների հսկողության միջոցով հրդեհի հայտնաբերման և (կամ) հրդեհի մասին ազդանշանի ձևավորման համար.

ձեռքի հրշեջ ազդասարք՝ տեխնիկական միջոց, որը նախատեսված է հրդեհի մասին ազդանշանը ձեռքով միացնելու համար.

հրշեջ ծորակ՝ լրակազմ, որը բաղկացած է հրշեջ խողովակաշարի վրա տեղադրված և հրշեջ միացման գլխիկով սարքավորված հրշեջ փակիչ կափույրից և ձեռքի փողով հրշեջ ճկափողից.

հրշեջ պահարան՝ հրշեջ գույքի տեսակ, որը նախատեսված է հրդեհի ժամանակ կիրառվող հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների, այդ թվում՝ մարդկանց պաշտպանության և փրկելու միջոցների, ինչպես նաև նյութական արժեքների տեղավորման ու դրանց պահպանվածությունն ապահովելու համար.

կառուցվածքի հրակայունության (հակահրդեհային պատնեշների որմնանցքերի լրացման) սահման՝ ստանդարտ փորձարկումների պայմաններում կրակի ներգործության սկզբից մինչև տվյալ կառուցվածքի համար նորմավորվող սահմանային իրավիճակներից որևէ մեկի սկսվելն ընկած ժամանակահատվածը.

ընդունիչ-վերահսկիչ հրշեջ սարք՝ տեխնիկական միջոց, որը նախատեսված է հրշեջ այն ազդասարքերից և այլ սարքավորումներից ստացվող ազդանշաններն ընդունելու և արտացոլելու համար, որոնք փոխգործակցում են այդ տեխնիկական միջոցի հետ, տեխնիկական միջոցի ու ցանցային ցուցանշման սարքերի և իրադարձությունների ձայնային ազդանշանման միջև կապի գծերի

ամբողջականությունն ու գործունեությունը հսկելու, կառավարման հրշեջ սարքը գործի դնելու ելակետային իմպուլսը ձևավորելու համար.

կառավարման հրշեջ սարք՝ տեխնիկական միջոց, որը նախատեսված է հակահրդեհային պաշտպանության ավտոմատ միջոցների (համակարգերի) կատարողական սարքերը կառավարելու, այդ կատարողական սարքերի հետ կապի գծերի և հրշեջ ավտոմատիկայի կառավարվող համակարգի աշխատանքի ռեժիմի ամբողջականության հսկողությունն իրականացնելու համար.

վաճառող՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա տարածքում իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որը սպառողի (օգտագործողի) համար իրականացնում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների մեծածախ (մանրածախ) իրացում և պատասխանատու է Միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության համար.

հակահրդեհային պատնեշ՝ շինությունների, շենքերի և կառույցների միջև հրդեհի տարածումը կանխելու համար նախատեսված հրդեհային անվտանգության ապահովման միջոց, հրակայունության նորմավորված սահմանով և հրդեհային վտանգավորության դասով շինարարական կառուցվածք, շինության ծավալային տարր կամ այլ ինժեներատեխնիկական միջոց.

հրդեհի ժամանակ ազդարարելու և մարդկանց տարահանումը կառավարելու համակարգ՝ տեխնիկական միջոցների ամբողջություն, որը նախատեսված է հրդեհի առաջացման, տարահանման անհրաժեշտության, տարահանման ուղիների և հերթականության մասին մարդկանց տեղեկացնելու համար.

հրդեհի մասին ծանուցումների փոխանցման համակարգ՝ տեխնիկական միջոցների ամբողջություն, որոնք նախատեսված են պահպանվող օբյեկտում (օբյեկտներում) հրդեհի բռնկման մասին ծանուցումները, ծառայողական և հսկիչ-ախտորոշման ծանուցումները կապուղիներով փոխանցելու և կենտրոնացված հսկման կետում կամ շուրջօրյա հերթապահություն անցկացնող անձնակազմի սենյակում ընդունելու համար, ինչպես նաև հեռակառավարման հրահանգների փոխանցման և ընդունման համար (կապի հետադարձ ուղու առկայության դեպքում).

հրշեջ ավտոմատիկայի համակարգ՝ հրդեհի ազդանշանման, հրդեհի մասին ծանուցումների փոխանցման, ազդարարման և մարդկանց տարահանումը ղեկավարելու, հակածխային օդափոխության, ավտոմատ հրդեհաշիջման կայանքների և օբյեկտի հրդեհային անվտանգության ապահովման համար նախատեսված ավտոմատ հակահրդեհային պաշտպանության այլ սարքավորումների փոխգործակցող համակարգերի ամբողջություն.

հրշեջ ազդանշանման համակարգ՝ փոխգործակցող տեխնիկական միջոցների ամբողջություն, որոնք նախատեսված են հրդեհը հայտնաբերելու, հրդեհի, համակարգի աշխատանքի ռեժիմների մասին ազդանշանների և այլ տեղեկատվություն ձևավորելու, հավաքելու, մշակելու, գրանցելու ու տրված ձևով փոխանցելու համար, և տեխնոլոգիական, էլեկտրատեխնիկական ու այլ սարքավորումներով հակահրդեհային պաշտպանության տեխնիկական միջոցների կառավարման ազդանշանները (անհրաժեշտության դեպքում) տրամադրելու համար.

հակածխային օդափոխության համակարգ՝ փոխգործակցող տեխնիկական միջոցների ամբողջություն, որոնք նախատեսված են հրդեհի ժամանակ շենքերի և շինությունների ծխոտվածության վտանգը, ինչպես նաև մարդկանց և նյութական արժեքների վրա հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունը կանխելու և սահմանափակելու համար.

փրկում՝ դեպի անվտանգ գոտի մարդկանց անհատական կամ հավաքական տեղափոխման գործընթաց՝ հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից նրանց կյանքի և (կամ) առողջության համար սպառնալիքի առկայության դեպքում, այդ թվում՝ փրկելու և պաշտպանության համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

պաշտպանության միջոցներ՝ տեխնիկական միջոցներ, որոնք ապահովում են մարդկանց անվտանգությունը և պաշտպանությունը հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից, այդ թվում՝ նրանց տարահանման, ինքնափրկման և փրկման ժամանակ.

հրշեջի անհատական պաշտպանական միջոցներ՝ անհատական օգտագործման միջոցներ (հրշեջի հատուկ պաշտպանական հագուստ, հրշեջի շնչառական, տեսողական օրգանների, գլխի, ձեռքերի և ոտքերի անհատական պաշտպանության միջոցներ), որոնք հրշեջը կրում է (կիրառում է)՝ իր վրա հրդեհի

վտանգավոր գործոնների ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար.

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցներ` միջոցներ, որոնք նախատեսված են հրդեհը կանխելու, հրդեհի առաջացման և զարգացման ռիսկը նվազեցնելու, դրա վտանգավոր գործոնների տարածումը սահմանափակելու, հրդեհը մարելու, մարդկանց փրկելու, հրդեհի հետևանքները վերացնելու, մարդու կյանքը և (կամ) առողջությունը, գույքը, շրջակա միջավայրը հրդեհից պաշտպանելու, ինչպես նաև հրդեհի հետևանքով վնաս հասցնելու և (կամ) կորուստ պատճառելու ռիսկը նվազեցնելու համար:

հրշեջի ինքնափրկման միջոցներ` տեխնիկական միջոցներ, որոնք արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում ապահովում են վտանգավոր գոտուց հրշեջի ինքնուրույն կամ հարկադրական տեղափոխման անվտանգությունը.

փրկարարական միջոցներ` տեխնիկական միջոցներ, որոնք ապահովում են մարդկանց ինքնուրույն կամ հարկադրական տեղափոխումն այն վայրերից, որտեղ հնարավոր է նրանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների և (կամ) դրանց ուղեկցող դրսևորումների ազդեցությունը, և որտեղից տարհանումը արգելափակվել է հրդեհի վտանգավոր գործոններով կամ այլ պատճառներով.

հրապաշտպանության միջոց` հրապաշտպանական բաղադրություն (պատվածք) կամ նյութ, որը հրապաշտպանական արդյունավետություն ունի և նախատեսված է շինարարական նյութերի, կոնստրուկցիաների, մալուխային արտադրանքի, մանածագործական նյութերի հրապաշտպանության համար.

**ռոբոտատեխնիկական միջոց`** տեխնիկական միջոց, որը կատարում է գործառույթներ, աշխատանքի տեսակներ կամ գործառնություններ` առանց վտանգավոր գոտում մարդու անմիջական ներկայության.

տեխնիկական միջոց` սարք և (կամ) սարքավորում, որոնք հրդեհի ժամանակ ապահովում են անվտանգությունը և (կամ) գործում են հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման համակարգերի (միջոցների) կազմում.

հրդեհաշիջման կայանք` հրդեհաշիջման նյութի բացթողման միջոցով հրդեհի մարման ստացիոնար տեխնիկական միջոցների ամբողջություն.

հրդեհաշիջման ավտոմատ կայանք` հրդեհաշիջման կայանք, որը հրդեհի ազդանշանման համակարգից կամ բռնկումը հայտնաբերելու սեփական

տեխնիկական միջոցներից ղեկավարող ազդանշանն ստանալիս առանց մարդու մասնակցության ապահովում է կրակմարիչ նյութի մատակարարումը (բացթողումը), ինչպես նաև արտաքին շղթաներում հրդեհի մասին ազդանշանի փոխանցումը.

հրդեհաշիջման ինքնավար կայանք՝ հրդեհաշիջման ավտոմատ կայանք, որը գործում է սնուցման արտաքին աղբյուրներից ու կառավարման համակարգերից անկախ և ապահովում է արտաքին շղթաներում հրդեհի մասին ազդանշանի փոխանցումը.

հրդեհաշիջման մոդուլային կայանք՝ հրդեհաշիջման ավտոմատ կայանք, որը բաղկացած է հրդեհաշիջման մեկ կամ մի քանի մոդուլներից, նախատեսված է առանձին օբյեկտի (շինության, շինության մի մասի և (կամ) տեխնոլոգիական սարքավորումների միավորի) մարման համար.

հրդեհաշիջման ռոբոտացված կայանք՝ հրդեհաշիջման ավտոմատ կայանք, որը համալրված է բռնկման օջախը հայտնաբերելու և հրդեհի գոտում կրակմարիչ նյութի բացթողումը կառավարելու տեխնիկական միջոցներով.

հրդեհաշիջման ինքնավար սարքավորում՝ ստացիոնար տեխնիկական միջոց, որը նախատեսված է հրդեհի մարման համար և հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից գործարկման ժամանակ ապահովում է կրակմարիչ նյութի բացթողումը.

տարիանում՝ տարիանման ուղիներով դեպի անվտանգ գոտի մարդկանց կազմակերպված տեղաշարժի գործընթաց:

III. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման
միջոցների նույնականացման կանոնները

7. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նույնականացումն իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառության ոլորտին դրանց պատկանելության հաստատման, ձեռք բերողներին (սպառողներին) մուրրության մեջ գցող գործողությունների կանխման, տեխնիկական փաստաթղթերին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հավաստման համար:

8. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նույնականացումն իրականացվում է՝

ա) անդամ պետությունների տարածքներում հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների շրջանառության մեջ բացթողումն իրականացնող արտադրողի, արտադրողի լիազորված անձի, վաճառողի (մատակարարի) կողմից.

բ) Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման հավատարմագրված մարմնի կողմից (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմին).

գ) անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս:

9. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նույնականացման հատկանիշներն են՝ դրա անվանումը, տիպը (տեսակը), մակնիշը, մոդելը, նշանակությունը, հիմնական տեխնիկական պարամետրերն ու բնութագրերը, ապրանքային նշանը և (կամ) արտադրողի անվանումը, երկրի անվանումը, որտեղ արտադրվել է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման տվյալ միջոցը:

10. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նույնականացումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի գործողության ոլորտին դրանց պատկանելությունը որոշելու նպատակով, իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի V բաժնին և սույն Տեխնիկական կանոնակարգի

հավելվածին համապատասխան:

11. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նույնականացումն անցկացվում է հետևյալ մեթոդներից որևէ մեկի կամ դրանց համադրության կիրառմամբ՝

ա) նույնականացում ըստ տեխնիկական փաստաթղթերի՝ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի տիպի (տեսակի), նշանակության և տեխնիկական փաստաթղթերում նշված դրա տեխնիկական բնութագրերի համեմատությունը սույն Տեխնիկական կանոնակարգի V բաժնով և սույն Տեխնիկական կանոնակարգի հավելվածով նախատեսված տվյալների հետ.

բ) տեսողական մեթոդ՝ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի արտաքին տեսքի համեմատությունը տեխնիկական փաստաթղթերում բերված նկարագրության հետ.

գ) գործիքային մեթոդ՝ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի չափսերը չափելու կամ փորձարկումներն անցկացնելու հետևանքով ստացված տվյալների համեմատությունը տեխնիկական փաստաթղթերում նշված տեխնիկական բնութագրերի հետ: Գործիքային մեթոդը կիրառվում է, եթե հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցը հնարավոր չէ նույնականացնել սույն կետի «ա» և «բ» ենթակետերում նշված մեթոդների կիրառման միջոցով:

IV. Միության շուկայում հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների շրջանառության կանոնները

12. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցները Միության շուկայում շրջանառության մեջ են դրվում սույն Տեխնիկական կանոնակարգի և Միության (Մաքսային միության) ուժի մեջ մտած այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա և պայմանով, որ դրանք համապատասխանության գնահատում են անցել սույն Տեխնիկական կանոնակարգի VII բաժնի համաձայն:

13. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցները, որոնց համապատասխանությունը սույն Տեխնիկական

կանոնակարգի, ինչպես նաև Միության (Մաքսային միության) ուժի մեջ մտած այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, չի հավաստվել, չեն մականշվում Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով և Միության շուկայում դրանց շրջանառության մեջ բացթողումը չի թույլատրվում:

V. Տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող պահանջները

14. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցները պետք է ապահովեն հրդեհի կանխումը, առաջացման ռիսկի նվազեցումը, հրդեհի զարգացման և դրա վտանգավոր գործոնների տարածման սահմանափակումը, հրդեհի մարումը, մարդկանց փրկելը, հրդեհից մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի պաշտպանումը, ինչպես նաև հրդեհի հետևանքով վնաս հասցնելու և (կամ) կորուստ պատճառելու ռիսկի նվազեցումը:

15. Կրակմարիչ նյութերը պետք է ապահովեն հրդեհի մարումը դրանց մակերեսային (տեղային-մակերեսային) և (կամ) ծավալային (տեղային-ծավալային) մատակարարման եղանակով՝ կրակմարիչ նյութերի մատակարարման բնութագրերին և մարման մարտավարությանը համապատասխան:

16. Կրակմարիչ նյութերը պետք է կիրառվեն այն նյութերի մարման համար, որոնց հետ փոխներգործությունը չի հանգեցնում հրդեհի կամ պայթյունի նոր օջախների առաջացման վտանգին:

17. Փոխադրման և պահպանման ընթացքում կրակմարիչ նյութերը պետք է պահպանեն հրդեհի մարման համար անհրաժեշտ իրենց հատկությունները:

18. Հրապաշտպանության միջոցները պետք է ունենան հրապաշտպանական արդյունավետություն, որն ապահովում է հրդեհային վտանգի նվազեցումը և (կամ) պաշտպանվող օբյեկտների հրակայունության բարձրացումը մինչև նորմավորվող մակարդակ:

19. Հրապաշտպանության միջոցների տեխնիկական փաստաթղթերը պետք է տեղեկատվություն պարունակեն այն տեխնիկական ցուցանիշների մասին, որոնք բնութագրում են դրանց կիրառման ոլորտը, մակերևույթի նախապատրաստման եղանակը, նախաներկային հիմքերի տեսակները և

մակնիշները, պաշտպանված մակերևույթի ծածկապատման եղանակը, չորացման պայմանները, այդ միջոցների հրապաշտպանական արդյունավետությունը, անբարենպաստ կլիմայական ազդեցություններից պաշտպանության եղանակը, հրապաշտպանական պատվածքների շահագործման պայմանները և ժամկետը, հրապաշտպանական աշխատանքների անցկացման ժամանակ անվտանգության միջոցները, ինչպես նաև փոխադրման ու պահպանման կարգը:

20. Պողպատե և (կամ) երկաթբետոնե կառուցվածքների հրապաշտպանության միջոցի համար տեխնիկական փաստաթղթերում լրացուցիչ նշվում են տեղեկություններ հրապաշտպանական ծածկույթի հաստության և հրապաշտպան միջոցի ծախսի մասին, որոնք անհրաժեշտ են պահանջվող հրապաշտպանության արդյունավետության ձեռքբերման համար, ինչպես նաև նշվում են չոր մնացորդը և հրապաշտպանական ծածկույթի հրապաշտպանական արդյունավետության պահպանման ժամկետը:

Հրապաշտպանական շերտի մակերևույթը թույլատրվում է պատել լրացուցիչ ծածկույթով՝ դեկորատիվ տեսք հաղորդելու կամ կլիմայական անբարենպաստ ազդեցության նկատմամբ կայունությունն ապահովելու համար: Այս դեպքում հրապաշտպանական արդյունավետությունը պետք է նշվի՝ հաշվի առնելով լրացուցիչ ծածկույթը:

21. Մալուխների հրապաշտպանության միջոցների համար տեխնիկական փաստաթղթերում տեղեկություններ են նշվում հրապաշտպանական ծածկույթի հաստության և հրապաշտպանության միջոցի ծախսի մասին, որոնք անհրաժեշտ են պահանջվող հրապաշտպանական արդյունավետության ձեռքբերման համար, նաև նշվում են չոր մնացորդը և կիրառման ոլորտը (մալուխների արտաքին թաղանթների տեսակները, որոնց համար դրանք կիրառվում են):

22. Փայտանյութի և դրա հիման վրա նյութերի հրապաշտպանության միջոցների համար տեխնիկական փաստաթղթերում նշվում են բաղադրության խտությունը և մակերեսի կամ ծավալի միավորի համար դրա ծախսը (կախված ծածկապատման եղանակից): Այն դեպքում, երբ արտադրողի կողմից փայտանյութի և դրա հիման վրա նյութերի հրապաշտպանական միջոցների ծառայության ժամկետը սահմանվել է մեկ տարուց ավելի, դա պետք է հաստատվի հնացման նկատմամբ կայունության փորձարկումներով:

23. Ոչ մետաղական նյութերից էլեկտրամոնոտաժային գծամետրային արտադրատեսակները մենահատ կամ խմբային տեղադրման ժամանակ պետք է ունենան ջերմակայունություն, կայունություն՝ տաքացած մետաղալարից բռնկվելու նկատմամբ, կայունություն՝ բաց բոցի ազդեցության նկատմամբ և կայունություն՝ վառվելու տարածման նկատմամբ:

24. Կրակմարիչները պետք է ապահովեն հրդեհի մոդելային օջախների մարումը:

Փոխադրելի և շարժական կրակմարիչների կառուցվածքային տարրերի ամրության բնութագրերը պետք է ապահովեն նման կրակմարիչների կիրառման անվտանգությունը հրդեհի մարման ժամանակ:

25. Հրշեջ ծորակները և հրշեջ փակիչ կափույրները, որոնք օգտագործվում են հրշեջ ծորակներում, պետք է ապահովեն մեկ մարդու կողմից փականային սարքավորման բացման հնարավորությունը և պահանջվող (նորմավորվող) ծախսով հակահրդեհային ջրատար համակարգից ջրի մատակարարումը:

Հրշեջ ծորակների միացման գլխիկների կառուցվածքը պետք է ապահովի դրանց միացումը հրշեջ ստորաբաժանումների կողմից օգտագործվող հրշեջ ճկափողերին:

26. Հրշեջ պահարաններում, դրանց նշանակությունից կախված, պետք է տեղադրված լինեն և պահվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներ, հրշեջ սարքավորումներ, անձնական պաշտպանության և մարդկանց փրկելու միջոցներ:

Հրշեջ պահարանների կառուցվածքները պետք է ապահովեն դրանցում գտնվող տեխնիկական միջոցների արագ և անվտանգ օգտագործումը:

Հրշեջ պահարանները պետք է պատրաստված լինեն չայրվող նյութերից:

Հրշեջ պահարանների արտաքին ձևավորումը և դրանց պարունակության մասին տեղեկությունները պետք է ապահովեն հրշեջ պահարաններում տեղադրված տեխնիկական միջոցների առկայության և կազմի մասին օպերատիվ իրազեկման հնարավորությունը:

27. Հրդեհաշիջման շարժական միջոցները պետք է ապահովեն հետևյալ գործառնություններից մեկի կամ մի քանիսի կատարումը՝

ա) հրշեջ ստորաբաժանումների անձնակազմին, կրակմարիչ նյութերը,

հրշեջ սարքավորումները, հրշեջների անհատական պաշտպանության և հրշեջների ինքնափրկման միջոցները, հրշեջ գործիքները, մարդկանց փրկելու միջոցները հրդեհի վայր հասցնելը.

բ) հրդեհի գոտի կրակմարիչ նյութերի մատակարարումը.

գ) հրդեհի մարման հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքների կատարումը.

դ) հրշեջ ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների անվտանգության ապահովումը:

28. Հրշեջ շարժիչապոմպերը պետք է իրականացնեն ջրատար համակարգից, տարողություններից և (կամ) բաց ջրային աղբյուրներից հրդեհի մարման համար պահանջվող ծախսով և աշխատանքային ճնշմամբ ջուր վերցնելն ու մատակարարումը:

Փոխադրելի հրշեջ շարժիչապոմպերի կառուցվածքը պետք է ապահովի երկու օպերատորների կողմից դրանց տեղափոխման և գրունտի վրա (ջրային մակերևույթին) տեղադրման հնարավորությունը:

Կցովի հրշեջ շարժիչապոմպերը պետք է հաստատուն մոնտաժվեն կցորդների վրա: Կցորդների կառուցվածքը պետք է ապահովի հրդեհի վայր հրշեջ շարժիչապոմպերի փոխադրման անվտանգությունը և դրանց կայուն տեղադրումը՝ ջրի հավաքման և մատակարարման ժամանակ:

29. Հրդեհաշիջման շարժական միջոցների համար կենտրոնախույս հրշեջ պոմպերը ջրի, ջրային փրփրարար լուծույթների մատակարարումը պետք է իրականացնեն պահանջվող (նորմավորվող) ծախսով և աշխատանքային ճնշմամբ:

30. Հրդեհաշիջման շարժական միջոցների համար կենտրոնախույս հրշեջ պոմպերը, կախված դրանց կառուցվածքային առանձնահատկություններից և հիմնական պարամետրերից, պետք է ապահովեն՝

ա) ջրի և կրակմարիչ լուծույթների մատակարարումը՝ նորմալ ճնշման դեպքում.

բ) ջրի և կրակմարիչ լուծույթների մատակարարումը՝ բարձր ճնշման դեպքում.

գ) ջրի և կրակմարիչ լուծույթների միաժամանակյա մատակարարումը՝ նորմալ և բարձր ճնշման դեպքում.

դ) ջրային բաց աղբյուրներից ջրի հավաքումը (ներծծումը):

31. Հրշեջ ավտոմատիկայի կազմում գործող տեխնիկական միջոցները, կախված իրենց նշանակությունից, պետք է ապահովեն հետևյալ մեկ կամ մի քանի գործառույթների կատարումը՝

ա) հրդեհի ավտոմատ հայտնաբերումը, հրդեհի մասին ազդանշանի ավտոմատ կամ ավտոմատ և ձեռքով միացումը.

բ) հրդեհի մասին հերթապահ աշխատակազմին իրազեկումը.

գ) կառավարող ազդանշանների հաղորդումը հրդեհի մասին մարդկանց տեղեկացնելու և մարդկանց տարահանումը կառավարելու սարքավորումներին, տարահանման լուսավորության միացմանը, հակահրդեհային պաշտպանության համակարգերի կատարողական սարքավորումներին (հրդեհաշիջման, հակաձխային օդափոխության).

դ) ինժեներական և տեխնոլոգիական սարքավորումների կառավարման ազդանշանների ձևավորումը.

ե) հերթապահ աշխատակազմին հրշեջ ավտոմատիկայի համակարգերի կազմի մեջ մտնող առանձին տեխնիկական սարքավորումների միջև կապի գծերի անսարքության առաջացման մասին տեղեկացումը:

32. Հրշեջ ավտոմատիկայի համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է ապահովեն միմյանց միջև, ինչպես նաև դրանց հետ փոխգործակցող այլ տեխնիկական միջոցների հետ էլեկտրական և տեղեկատվական համատեղելիությունը:

33. Հրշեջ ավտոմատիկայի համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է պահպանեն աշխատունակությունը բարձր ջերմաստիճանի և խոնավության, ինչպես նաև մեխանիկական ազդեցությունների պայմաններում:

34. Հրշեջ ազդանշանման համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները, կախված իրենց նշանակությունից, պետք է ապահովեն հետևյալ մեկ կամ մի քանի գործառույթների կատարումը՝

ա) հրդեհի հայտնաբերումը.

բ) հրդեհի, հրշեջ ազդանշանման համակարգի աշխատանքի ռեժիմների մասին ազդանշանների ձևավորումը, հավաքագրումը, մշակումը, գրանցումը և տրված ձևով փոխանցումը.

գ) տեխնոլոգիական, էլեկտրատեխնիկական և այլ սարքավորումներով հակահրդեհային պաշտպանության տեխնիկական միջոցների կառավարման ազդանշանների հաղորդումը:

35. Հրդեհի մասին ծանուցումների փոխանցման համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է ապահովեն՝

ա) կապի գծով (գծերով) կենտրոնացված հսկման վահանակին հրդեհի և օբյեկտի հրշեջ ավտոմատիկայի համակարգի միջոցով գրանցվող անսարքությունների մասին տագնապային ծանուցումների փոխանցումը.

բ) օբյեկտի հրշեջ ավտոմատիկայի համակարգի և կենտրոնացված հսկման վահանակի միջև կապի գծի անսարքության ավտոմատ հսկողությունը:

36. Տեղեկացման և մարդկանց տարահանման կառավարման համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները հրդեհի դեպքում պետք է ապահովեն մարդկանց իրազեկումն այն ժամանակի ընթացքում, որն անհրաժեշտ է մարդկանց տարահանելու, ինչպես նաև տարահանման ուղիների և միջոցների մասին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար:

37. Տեղեկացման և մարդկանց տարահանման կառավարման համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները հրդեհի դեպքում պետք է ապահովեն հրդեհի մասին մարդկանց իրազեկումը հետևյալ միջոցներից մեկով կամ դրանց ցանկացած ընդունելի համակցությամբ՝

լուսային, ձայնային և (կամ) խոսքային ազդանշանների հաղորդումը շենքի բոլոր տարածքներում, որտեղ մշտապես կամ ժամանակավորապես մարդիկ են գտնվում.

տարահանման անհրաժեշտության, տարահանման ուղիների, շարժման ուղղության և այլ գործողությունների մասին հատուկ մշակված այն տեքստերի հեռարձակումը, որոնք ուղղված են հրդեհի դեպքում մարդկանց անվտանգության ապահովմանը և խուճապի առաջացման կանխարգելմանը.

տեղեկացման անհատական ազդանշանների հաղորդումը (լուսային, ձայնային, վիբրացիոն տեղեկացման ազդանշաններով և հետադարձ կապով անհատական սարքերի օգտագործմամբ)։

տարիանման ուղիների վրա նորմատիվային ժամանակի ընթացքում հրդեհային անվտանգության նշանների լուսավորումը։

հրշեջ ավտոմատիկայի ազդանշանից տարիանման (վթարային) լուսավորության միացումը։

տարիանման ելքերի դռների փականների հեռավար բացումը։

հրդեհի մասին մարդկանց իրազեկման գոտիների հետ հրշեջ կետի (կարգավարական կետի) կապով ապահովումը։

տարիանման ժամանակ մարդկանց տեղեկացման այլ եղանակներ։

Հրդեհի մասին տեղեկացման ազդանշանները պետք է տարբերվեն այլ նշանակության ազդանշաններից։

Հրշեջ ազդարարներն անհրաժեշտության դեպքում պետք է միացվեն էլեկտրական ցանցին, ինչպես նաև կապի անհրաժեշտ մյուս գծերին՝ առանց անջատովի սարքերի օգտագործման։ Հրշեջ ազդարարները ձայնային և խոսքային ազդանշանների հաղորդման ժամանակ ուժգնության մակարդակը կարգավորելու հնարավորություն չպետք է ունենան։

38. Ավտոմատ հրշեջ կայանքների (այդ թվում՝ հրդեհաշիջման ինքնավար կայանքների, հրդեհաշիջման մոդուլային կայանքների, հրդեհաշիջման ռոբոտացված կայանքների) կազմում գործող տեխնիկական միջոցները, կախված դրանց նշանակությունից, պետք է ապահովեն (առանց մարդու մասնակցության) հրդեհի հայտնաբերումը, արտաքին շղթայում հրդեհի մասին ազդանշանի փոխանցումը և հրդեհի գոտում պահանջվող (նորմավորվող) բնութագրերով կրակմարիչ նյութի մատակարարումը (բացթողումը)։

Հրդեհաշիջման ինքնավար կայանքների կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է ապահովեն նշված գործառույթների կատարումը՝ անկախ սնուցման արտաքին աղբյուրների և կառավարման համակարգերի առկայությունից։

39. Հրդեհաշիջման ռոբոտացված կայանքները և հրդեհաշիջման

ռորոտացված կայանքների կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է ապահովեն հետևյալ խնդիրների կատարումը՝

ա) բռնկման օջախի հայտնաբերումը.

բ) հրդեհի գոտում պահանջվող (նորմավորվող) բնութագրերով կրակմարիչ նյութի մատակարարման ապահովումը (մատակարարման ինտենսիվությամբ, փրփուրի բազմապատիկությամբ և այլն):

40. Հրդեհաշիջման ինքնավար սարքավորումները պետք է ապահովեն պահանջվող (նորմավորվող) բնութագրերով կրակմարիչ նյութի մատակարարումը (բացթողումը)՝ հրդեհի վտանգավոր գործոններից մեկի կամ մի քանիսի ազդեցությամբ դրանց գործարկման ժամանակ:

41. Հրդեհաշիջման շարժական միջոցները պետք է ապահովեն իրենց առաջընթացումն աշխատանքների անցկացման գոտի և հրդեհաշիջման գործառույթների կատարումը՝ պահանջվող (նորմավորվող) բնութագրերով կրակմարիչ նյութի մատակարարմամբ, և (կամ) վթարային-փրկարարական աշխատանքների այլ տեսակներ՝ վտանգավոր գոտում առանց մարդու անմիջական մասնակցության (գտնվելու):

42. Հրշեջների անհատական պաշտպանության միջոցները հրդեհի մարման, վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման և (կամ) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ հրշեջ ստորաբաժանումների անձնակազմին պետք է պաշտպանեն հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից, կլիմայական անբարենպաստ ազդեցություններից:

43. Հրշեջների անհատական պաշտպանության միջոցների թվին են դասվում՝

ա) շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցները.

բ) հրշեջի հատուկ պաշտպանական հագուստը.

գ) հրշեջի ձեռքերի, ոտքերի և գլխի անհատական պաշտպանության միջոցները:

44. Հրշեջի անհատական պաշտպանության միջոցները պետք է երգոնումիկ կերպով զուգակցվեն միմյանց և լուսազդանշանային տարրեր ունենան, որոնք

թույլ են տալիս ցածր տեսանելիության պայմաններում իրականացնել հրշեջների տեսողական հսկողություն և որոնում:

45. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցները և այդպիսի անհատական միջոցների կազմում գործող տեխնիկական միջոցները շնչելու համար ոչ պիտանի և աչքի լորձաթաղանթը գրգռող միջավայրում աշխատանքի ժամանակ պետք է ապահովեն հրշեջի պաշտպանությունը:

46. Ըստ գործողության սկզբունքի և կիրառման պայմանների՝ շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցները բաժանվում են՝

ա) շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների (խտացված օդով, խտացված թթվածնով)՝ ցանկացած հրդեհ մարելու համար.

բ) շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության զտիչ հրշեջ միջոցների՝ բացօթյա բնական հրդեհները մարելու համար.

գ) հրշեջ մեկուսիչ ինքնափրկարարների՝ հրշեջների ինքնափրկման համար:

47. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցները և այդ միջոցների կազմում գործող տեխնիկական միջոցները պետք է ջերմային և տեխնիկական ազդեցությունների, կլիմայական անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ կայունություն ունենան, ինչպես նաև ունենան էրգոնոմիկ և պաշտպանական ցուցանիշներ (հաշվի առնելով հրդեհների մարման մարտավարությունը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը, վթարային-փրկարարական աշխատանքների անցկացումը, մարդկանց փրկելու և հրշեջների ու փրկարարների աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման անհրաժեշտությունը):

48. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատները (խտացված օդով, խտացված թթվածնով) մարդու շնչառության ընթացքում դիմային մասի ենթադիմակային տարածության մեջ պետք է ապահովեն ավելցուկային ճնշման պահպանումը:

խտացված օդով շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների պաշտպանական գործողության անվանական ժամանակը (30 վրոպե թոքային օդափոխության դեպքում) պետք է լինի 60 րոպեից ոչ պակաս, իսկ խտացված թթվածնով շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատներինը՝ 240 րոպեից ոչ պակաս:

49. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցների կառուցվածքային կատարմամբ պետք է նախատեսվի շնչառական խառնուրդով բալոնների և (կամ) վերականգնման (կլանող) պարկուճների (բրիկետների) արագ փոխարինումը (առանց հատուկ գործիքների կիրառման):

50. Հրշեջ մեկուսիչ ինքնափրկարարները պետք է ապահովեն հրդեհի վտանգավոր գործոններից հրշեջի շնչառական և տեսողական օրգանների պաշտպանության անհրաժեշտ մակարդակը՝ առնվազն 25 րոպեի ընթացքում: Հրշեջ մեկուսիչ ինքնափրկարարները պետք է կայունություն ունենան ջերմային և տեխնիկական ազդեցությունների, կլիմայական անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ, ինչպես նաև ունենան երգոնոմիկ և պաշտպանական ցուցանիշներ՝ հաշվի առնելով հրդեհի ժամանակ այրման թունավոր արգասիքներից հրշեջների պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունը:

51. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների բալոնների լիցքավորման համար ճնշակային կայանքները պետք է ապահովեն շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների բալոններն օդով և (կամ) թթվածնով լիցքավորումը՝ շենքերի հատուկ տարածքներում, ինչպես նաև բաց տեղանքում դրանց ստացիոնար տեղակայման դեպքում:

Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների բալոնների լիցքավորման համար սեղմված օդով ճնշակային կայանքների աշխատանքային ճնշումը պետք է կազմի 29,4 ՄՊա-ից ոչ պակաս, իսկ թթվածնային ճնշակային կայանքներինը՝ 20,0 ՄՊա-ից ոչ պակաս:

Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների բալոնների լիցքավորման համար ճնշակային կայանքները պետք է նախատեսված լինեն հետևյալ պայմաններում կիրառման համար՝

փոխադրելի և ամրակայված՝ շրջակա միջավայրի +5 °C-ից մինչև +40 °C

ջերմաստիճանի դեպքում.

շարժական՝ շրջակա միջավայրի $-50\text{ }^{\circ}\text{C}$ -ից մինչև $+50\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում:

52. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների ստուգման կայանքները պետք է ապահովեն հրշեջ պաշտպանության գազածխային ծառայության ստացիոնար կետերում և (կամ) ավտոմեքենաների վրա, ինչպես նաև սպասարկման կենտրոններում խտացված օդով և (կամ) խտացված թթվածնով շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների տեխնիկական պարամետրերի ստուգման վերաբերյալ վիճակագրական կամ դինամիկ փորձարկումների անցկացումը:

Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների ստուգման կայանքները պետք է ապահովեն շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների վիճակագրական փորձարկումների անցկացումը՝ շրջակա օդի $+5\text{ }^{\circ}\text{C}$ -ից մինչև $+40\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի ընդգրկությամբ:

Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների ստուգման կայանքները պետք է ապահովեն շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների դինամիկ փորձարկումների անցկացումը շնչառության ռեժիմում, որը բնութագրվում է թոքային օդափոխությամբ՝ 30 -ից մինչև $100\text{ դմ}^3 \times \text{րոպե}^{-1}$ (խտացված օդով շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների համար) և 30 -ից մինչև $85\text{ դմ}^3 \times \text{րոպե}^{-1}$ (խտացված թթվածնով շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների համար):

53. Հրշեջի հատուկ պաշտպանական հագուստը բաժանվում է հետևյալ տեսակների՝

հրշեջի ընդհանուր նշանակության հատուկ պաշտպանական հագուստ.

հրշեջի՝ բարձր ջերմային ներգործությունից պաշտպանող հատուկ պաշտպանական հագուստ.

հրշեջի մեկուսիչ տիպի հատուկ պաշտպանական հագուստ.

հրշեջների համար ջերմակայուն ներքնազգեստ.

հրշեջների համար ենթասաղավարտ:

Հրշեջի հատուկ պաշտպանական հագուստը պետք է ապահովի հրդեհի վտանգավոր գործոններից և անբարենպաստ կլիմայական ազդեցություններից

պաշտպանությունը, ընդ որում՝ պաշտպանության աստիճանը պետք է բնութագրվի այնպիսի ցուցանիշներով, որոնց արժեքները սահմանվում են հրշեջների աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման անհրաժեշտությանը համապատասխան:

Հրշեջի հատուկ պաշտպանական հագուստի կառուցվածքային կատարումը պետք է խոչընդոտի հագուստի ներքին տարածություն կրակմարիչ նյութերի թափանցումը և ապահովի հագուստը շտապ հանելու, շնչառական ապարատի բալոններում ճնշումը վերահսկելու, տեղեկատվություն ընդունելու և փոխանցելու հնարավորությունը (ծայնային, տեսողական կամ հատուկ սարքերի միջոցով):

Հրշեջի մեկուսիչ տիպի հատուկ պաշտպանական հագուստի կառուցվածքը համազգեստի տակ գտնվող տարածության մեջ պետք է ապահովի օդի ավելցուկային ճնշման պահպանումն այն մակարդակով, որն անհրաժեշտ է այդպիսի հատուկ պաշտպանական հագուստով աշխատող հրշեջի աշխատանքի անվտանգ պայմանների ապահովման համար:

Վտանգավոր արտադրական օբյեկտներում հրդեհների մարման ժամանակ օգտագործվող հրշեջի մեկուսիչ տիպի հատուկ պաշտպանական հագուստը պետք է ապահովի մարդու մաշկային ծածկույթի վրա և ներքին օրգաններ ագրեսիվ և (կամ) ռադիոակտիվ նյութերի թափանցումից պաշտպանությունը: Ճառագայթման առումով վտանգավոր օբյեկտներում հրդեհների մարման և վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ օգտագործվող հրշեջի մեկուսիչ տիպի հատուկ պաշտպանական հագուստը պետք է ապահովի մարդու պաշտպանությունն իոնացնող ճառագայթումից: 2 կԷՎ-ից ոչ ավելի էներգիայով բետա-ճառագայթամբ (աղբյուր Sr90) արտաքին ներգործության նվազեցման գործակիցը պետք է լինի 150-ից ոչ պակաս, 122 կԷՎ էներգիայով գամմա-ճառագայթամբ (Co57 աղբյուր) արտաքին ներգործության նվազեցման գործակիցը՝ 5,5-ից ոչ պակաս:

54. Հրդեհների մարման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հետ կապված ցանկացած տեսակի աշխատանքների կատարման ժամանակ հրշեջի հատուկ պաշտպանական հագուստի հետ միասին օգտագործվող հրշեջների ենթասաղավարտը և ջերմակայուն ներքնազգեստը պետք է ապահովեն էրգոնոմիկ և ֆիզիոլոգիական-հիգիենիկ մակարդակը:

55. Գլխի անհատական պաշտպանության միջոցները (հրշեջ

սաղավարտներ) հրդեհների մարման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման և վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ պետք է ապահովեն ջրից, մեխանիկական, ջերմային, քիմիական ազդեցություններից և անբարենպաստ կլիմայական ազդեցություններից պաշտպանությունը:

56. Հրդեհի ձեռքերի անհատական պաշտպանության միջոցները հրդեհների մարման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման և վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ պետք է ապահովեն ձեռքերի պաշտպանությունը կրակմարիչ նյութերից, ջերմային և մեխանիկական ազդեցություններից, ինչպես նաև պետք է ունենան անհրաժեշտ էրգոնոմիկ հատկություններ:

57. Հրդեհի ոտքերի անհատական պաշտպանության միջոցները հրդեհների մարման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման և վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ պետք է ապահովեն ոտքերի պաշտպանությունը ջրից, մեխանիկական, ջերմային, քիմիական ազդեցություններից և անբարենպաստ կլիմայական ազդեցություններից, ինչպես նաև պետք է ունենան անհրաժեշտ էրգոնոմիկ հատկություններ:

58. Հրդեհի ժամանակ բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու միջոցները պետք է ապահովեն դեպի անվտանգ գոտի մարդկանց ինքնուրույն տեղափոխման հնարավորությունը՝ հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցության հետևանքով առաջացած՝ նրանց կյանքին և (կամ) առողջությանը սպառնալիքի առկայության դեպքում, պետք է ունենան մարդկանց պաշտպանելու (ապահովական) հնարավորություն՝ հրդեհի ժամանակ նրանց փրկելիս և բարձրադիր մակարդակներում հրշեջների կողմից աշխատանքներ կատարելուց ու նրանց ինքնուրույն կերպով իջնելուց:

59. Հրդեհի ժամանակ բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու միջոցները պետք է լինեն օգտագործման համար մշտական պատրաստակամության վիճակում, պետք է ունենան անհրաժեշտ հոսսալիություն (ստատիկ ու դինամիկ բեռնվածքների դեպքում՝ ջերմաստիճանների աշխատանքային արժեքների սահմաններում, տաքացման և բաց բոցի ազդեցության դեպքում), հասանելիություն, պարզություն և հատուկ պատրաստություն չունեցող մարդկանց կողմից կիրառության անվտանգություն,

պետք է ապահովեն դեպի անվտանգ գոտի մարդկանց հարկադրական անհատական կամ հավաքական տեղափոխումը՝ հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցության կամ այլ արտակարգ իրավիճակների արդյունքում նրանց կյանքին (առողջությանը) սպառնալիքի առկայության դեպքում:

60. Հրդեհի ժամանակ բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու միջոցները դասակարգվում են ըստ՝

ա) գործողության ուղղության՝

ամբարձման-իջեցման.

իջեցման.

բ) տեղակայման և խարսխման եղանակի՝

ստացիոնար.

շարժական.

փոխադրելի.

գ) շինարարության և շահագործման փուլերի հետ փոխկապակցման՝

ճարտարապետականախագծային լուծումներով չնախատեսված.

ճարտարապետականախագծային լուծումներով ի սկզբանե նախատեսված.

դ) կառուցվածքային կատարման.

ճոպանային իջեցման հրշեջ սարքեր.

փրկարարական հրշեջ ճկափողեր.

թռիչքային փրկարարական հրշեջ սարքեր.

փրկարարական հրշեջ ելարաններ.

ձեռքի հրշեջ սանդուղքներ.

փրկարարական կախովի հրշեջ սանդուղքներ.

փրկարարական հրշեջ պարաններ, փրկարարական հրշեջ գոտիներ, հրշեջ զսպանակեռիկներ.

ազդեգատային-համակցված (այդ թվում՝ փրկարարական վերելակային

սարքեր)

ե) արտադրողականության՝

անհատական (այդ թվում՝ մեկանգամյա)

խմբային (կոլեկտիվ)։

զ) կառավարման եղանակի՝

վայրէջքի արագության ձեռքով կարգավորմամբ.

վայրէջքի արագության ավտոմատ կարգավորմամբ.

է) վայրէջքի բարձրության՝

վայրէջքի բարձրության սահմանափակմամբ.

առանց վայրէջքի բարձրության սահմանափակման։

61. Հրդեհների դեպքում հատուկ աշխատանքներ անցկացնելու համար գործիքը, կախված դրա ֆունկցիոնալ նշանակությունից, պետք է կատարի՝

ա) կտրում և կծում (այդ թվում՝ մետաղյա պրոֆիլի և շինարարական կառուցվածքների տարրերի)։

բ) տարբեր շինարարական կառուցվածքների ամբարձում, տեղափոխում և ֆիքսում.

գ) անցքերի և որմնանցքերի ծակատում, շինարարական կոնստրուկցիաների և նյութերի ջարդում.

դ) տարբեր մետաղյա կոնստրուկցիաների բացում (այդ թվում՝ դռնատեղերի և լուսամուտատեղերի)։

ե) տարբեր տրամագծի խողովակների անցքերի խցանում, անոթների և խողովակաշարերի ծակատների լցափակում։

62. Հրդեհների ժամանակ հատուկ աշխատանքներ անցկացնելու համար գործիքը պետք է սարքավորված լինի ապահովիչ սարքերով, որոնք կխոչընդոտեն գործիքի շարժական մեխանիզմների մեջ մարդու մարմնի կամ հագուստի մասերի պատահական ներթափանցումը։

Հրդեհների ժամանակ հատուկ աշխատանքներ անցկացնելու համար

գործիքի կառավարման օրգանները պետք է համալրված լինեն ցուցանակներով, որոնք կբացառեն դրանց վրա գետեղված տեղեկատվության ոչ միանշանակ մեկնաբանությունը:

Հրդեհների ժամանակ հատուկ աշխատանքներ անցկացնելու համար գործիքի ծայրակցման հանգույցների կառուցվածքը պետք է ապահովի դրանց ձեռքով արագ և ապահով միացնելն առանց բանալիների և այլ փականագործական գործիքի կիրառման:

63. Հրշեջների լրացուցիչ հանդերձանքը (հրշեջ լապտերներ, ջերմացույցներ, ռադիոփարոսներ և ձայնային փարոսներ), կախված դրա նշանակությունից, պետք է ապահովի հրդեհի վայրի լուսավորումը, ծխոտված մթնոլորտում հրդեհի օջախների և մարդկանց որոնումը, հրշեջների գտնվելու վայրի նշումը, ինչպես նաև հրդեհը մարելիս աշխատանքների այլ տեսակների կատարումը: Ընդ որում՝ նշված գործառույթների կատարման ապահովման մակարդակը պետք է բնութագրվի վթարափրկարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ցուցանիշներով:

64. Հրշեջ սարքավորումը պետք է ապահովի հրդեհը մարելու համար պահանջվող ծախսով և աշխատանքային ճնշմամբ հրդեհի վայր կրակմարիչ նյութեր մատակարարելու հնարավորությունը՝ հրդեհների մարման մարտավարությանը համապատասխան:

65. Հրշեջ ջրածորանները պետք ապահովեն ջրատարի արտաքին ցանցերի վրա դրանք տեղադրելու հնարավորությունը և ջուր վերցնելը հրդեհաշիջման նպատակների համար:

66. Հրշեջ սյունակները պետք է ապահովեն ստորգետնյա ջրածորանները բացելու (փակելու) և հրշեջ ճկափողերը միացնելու հնարավորությունը՝ հրդեհաշիջման նպատակներով ջրատար ցանցերից ջուր վերցնելու և դրա մատակարարման համար:

Հրշեջ սյունակի փակող սարքերի կառավարման օրգանների վրա մեխանիկական լարումները աշխատանքային ճնշման ժամանակ չպետք է գերազանցեն 150 H-ը:

67. Ճնշումային հրշեջ ճկափողերը և միացման հրշեջ գլխիկները պետք է ապահովեն հրդեհի վայր կրակմարիչ նյութեր փոխադրելու հնարավորությունը:

Միացման հրշեջ գլխիկները պետք է ապահովեն հրշեջ ճկափողերի՝ միմյանց միջև և այլ հրշեջ սարքավորման հետ արագ, հերմետիկ և ամուր միացումը:

Ճնշումային հրշեջ ճկափողերը և միացման հրշեջ գլխիկները պետք է ունենան ամրության և շահագործման բնութագրեր՝ կախված դրանց նշանակությունից:

Ճնշումային հրշեջ ճկափողերի սպասարկման համար սարքավորումները պետք է ապահովեն ճնշումային հրշեջ ճկափողերն աշխատունակ վիճակում պահպանելու համար համալիր աշխատանքների կատարումը:

68. Հրշեջ ծայրապնակները, փրփուրի գեներատորները և փրփրախառնիչները պետք է ապահովեն կրակմարիչ նյութերի մատակարարումը հրդեհի օջախ և հրդեհի մարումը կամ շինարարական կառուցվածքների, տեխնոլոգիական սարքավորումների, շենքերի, շինությունների կամ դրանց մասերի պաշտպանությունը (հովացումը):

69. Հրշեջ ծայրապնակների (ծեռքի և հրետասայլային) կառուցվածքը պետք է ապահովի՝

ա) ելքի հատվածում կրակմարիչ նյութերի հոծ կամ փոշիացված շիթի (այդ թվում՝ ցածր և միջին բազմապատիկության օդամեխանիկական փրփուր) ձևավորումը՝ կախված գլխադիրի կառուցվածքից և նշանակությունից.

բ) փոշիացված շիթի բոցակոնի ուղղությամբ կրակմարիչ նյութերի հավասարաչափ բաշխումը.

գ) շիթի տեսակի անաստիճան փոփոխությունը՝ հոծից մինչև փոշիացված.

դ) կրակմարիչ նյութերի (ունիվերսալ տեսակի հրշեջ ծայրապնակների համար) ծախսի փոփոխությունն առանց դրանց մատակարարումը դադարեցնելու.

ե) ծայրապնակի ամրությունը, միացումների և փակվող սարքերի հերմետիկությունն աշխատանքային ճնշման դեպքում.

զ) հրշեջ հրետասայլային ծայրապնակների դիրքերի ֆիքսումը՝ ուղղահայաց հարթության մեջ սահմանված անկյունների դեպքում.

է) հրշեջ հրետասայլային ծայրապնակների շրջադարձի մեխանիզմները

հորիզոնական և ուղղահայաց հարթություններում հիդրոշարժաբերի կամ էլեկտրաշարժաբերի միջոցով ձեռքով կառավարելու և հեռակառավարելու հնարավորությունը:

70. Փրփուրի գեներատորի կառուցվածքը պետք է ապահովի ցածր, միջին, բարձր բազմապատիկության կամ դրանց համակցությամբ օդամեխանիկական փրփուրի հոսքի ձևավորումը:

71. Փրփրախառնիչները (չկարգավորվող և կարգավորվող դոզավորմամբ) պետք է ապահովեն սահմանված խտությամբ փրփրարարի ջրային լուծույթի ստացումը՝ օդափրփուրային ծայրապնակներում և փրփուրի գեներատորներում որոշակի բազմապատիկության փրփուրի ձևավորման համար:

72. Փողրակային ջրահավաքիչները պետք է ապահովեն ջրի երկու և ավելի հոսքերի միավորումը՝ մինչև հրշեջ պոմպի ներծծող կարճախողովակ մտնելը: Փողրակային ջրահավաքիչները պետք է սարքավորված լինեն հակադարձ կափույրներով՝ միավորվող կարճախողովակներից յուրաքանչյուրի վրա:

73. Փողրակային ճյուղավորումները պետք է ապահովեն ջրի մայրուղային հոսքի կամ փրփրարար լուծույթների բաշխումը աշխատանքային փողրակային գծերով և այդ գծերում կրակմարիչ նյութերի ծախսի կարգավորումը:

Փողրակային ճյուղավորումների փակող սարքերի կառավարման օրգանների վրա մեխանիկական լարումներն աշխատանքային ճնշման ժամանակ չպետք է գերազանցեն 150 H-ը:

74. Հրշեջ ջրամբարձիչները պետք է ապահովեն ջրի մակերևույթի և հրշեջ պոմպի դիրքի մակարդակների՝ ներծծման առավելագույն բարձրությունը գերազանցող տարբերությամբ բաց ջրամբարներից ջրառքը, ինչպես նաև հրդեհ մարելիս կամ փորձարկումներ անցկացնելիս թափված ջրի հեռացումը տարածքից:

75. Ներծծող հրշեջ ցանցերը պետք է ապահովեն բաց ջրամբարներից վերցվող ջրի գտումը և կանխարգելեն այնպիսի պինդ մասնիկների ներթափանցումը, որոնք կարող են հանգեցնել պոմպերի աշխատանքի խափանմանը: Ներծծող հրշեջ ցանցերը պետք է սարքավորված լինեն հակադարձ կափույրներով:

76. Ձեռքի հրշեջ սանդուղքները պետք է ապահովեն հրշեջ ստորաբաժանումների անձնակազմի կողմից տարածքներ և շենքերի ու

շինությունների կտուրներ մտնելու, նշված տարածքներ կրակմարիչ նյութեր մատակարարելու, ինչպես նաև այդպիսի տարածքներից մարդկանց փրկելու հնարավորությունը:

Ձեռքի հրշեջ սանդուղքների եզրաչափային չափսերը և կառուցվածքը պետք է ապահովեն դրանք հրշեջ մեքենաներով փոխադրելու հնարավորությունը:

Ձեռքի հրշեջ սանդուղքների մեխանիկական ամրությունը, չափսերը և երգոնոմիական ու պաշտպանիչ ցուցանիշները պետք է ապահովեն բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու և անհրաժեշտ հրշեջ սարքավորումներ ամբարձելու հնարավորությունը:

77. Շենքերի և շինությունների ինժեներային համակարգերի մալուխային արտադրատեսակներով, հաղորդաձողալարերով, հերմետիկ մալուխային ներանցիչներով, կցորդիչներով և խողովակաշարերով հակահրդեհային արգելքների հատման հանգույցները պետք է հարակից տարածքներ հրդեհի վտանգավոր գործոնները տարածվելու նորմավորված ժամանակի ընթացքում ապահովեն կանխարգելումը՝ ըստ հրակայունության սահմանների դրանց դասակարգմանը համապատասխան:

78. Հակահրդեհային արգելքների (հակահրդեհային պատուհաններ, դռներ, հրակայունության նորմավորված սահմաններով վերելակների հորանների դռներ, դարպասներ, մտոցներ, գալարավարագույրներ, ռոլետներ, էկրաններ, վարագույրներ, նորմալ բացված հակահրդեհային կափույրներ) որմնանցքերի լրացումները պետք է ապահովեն հրդեհի վտանգավոր գործոնների տարածման նորմավորված ժամանակի ընթացքում կանխարգելումը՝ ըստ հրակայունության սահմանների դրանց դասակարգմանը համապատասխան:

79. Ծխագազաանթափանց հակահրդեհային դռները՝ հրակայունության պահանջվող սահմանների ներքո, պետք է ապահովեն ծխագազաթափանցմանը դիմադրելու նվազագույն անհրաժեշտ արժեքները:

80. Ծխաանթափանց դռները պետք է խոչընդոտեն հրդեհի ժամանակ ծխի տարածումը:

81. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցները, կախված դրանց նշանակությունից, պետք է լուծեն մեկ կամ մի քանի խնդիրներ, այդ թվում՝ հրդեհի դեպքում կանխարգելեն

տարածքների, աստիճանավանդակների, վերելակների հորանների, նախամուտք-անցախուցների, անվտանգության գոտիների ծխոտվածությունը՝ մարդկանց անվտանգությունն ապահովելու և հրշեջ ստորաբաժանումների կողմից շենքում և (կամ) շինությունում մարդկանց փրկելու և հրդեհի օջախը հայտնաբերելու և տեղայնափակելու աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով:

82. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող օդատարների կառուցվածքները պետք է լինեն հրակայուն և պատրաստված լինեն չայրվող նյութերից:

Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող օդատարների հետ արգելապատող շինարարական կառուցվածքների հատման հանգույցները պետք է ունենան այդպիսի օդատարների համար պահանջվող սահմաններից ոչ պակաս հրակայունության սահման: Ընդ որում՝ նշված օդատարների կառուցվածքների հիմքերի (կախոցների) տարրերը պետք է ունենան օդատարների համար սահմանված թվային արժեքներին համապատասխան հրակայունության սահմաններ՝ միայն կրող կարողության կորստի հատկանիշով:

Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող հրակայուն օդատարների կառուցվածքների անջատվող (այդ թվում՝ կցաշուրթային) միացումները խտացնելու համար թույլատրվում է կիրառել միայն չայրվող նյութեր:

83. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող նորմալ բացված հակահրդեհային կափույրները և նորմալ փակված հակահրդեհային կափույրները պետք է սարքավորվեն ավտոմատ կառավարվող և հեռակառավարվող շարժաբեքներով:

Նորմալ բացված հակահրդեհային կափույրների շարժաբեքների կազմում ջերմազգայուն տարրերի օգտագործումը պետք է նախատեսվի միայն որպես կրկնօրինակող: Նորմալ փակված հակահրդեհային կափույրների համար ջերմազգայուն տարրերով շարժաբեքների կիրառումը չի թույլատրվում: Նորմալ բացված հակահրդեհային կափույրները և նորմալ փակված հակահրդեհային կափույրները հրակայունության պահանջվող սահմանների ներքո պետք է ապահովեն ծխագազաթափանցմանը դիմադրելու անհրաժեշտ արժեքները:

84. Բնական մղման քարշանքով ծխային մտոցները պետք է կիրառվեն ավտոմատ կառավարվող և հեռակառավարվող շարժաբերներով (ջերմատարրերով կրկնօրինակելու հնարավորությամբ), որոնք ապահովում են մեխանիկական ծանրաբեռնվածությունը երկարաձգելու համար անհրաժեշտ քարշային լարումները (այդ թվում՝ ձյան և քամու)։

85. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող օդաքաշ օդափոխիչները բարձր ջերմաստիճանով այրման արգասիքները տեղափոխելիս պետք է պահպանեն աշխատունակությունը մարդկանց տարհանելու համար անհրաժեշտ ժամանակի ընթացքում (տարհանման ուղիներում մարդկանց պաշտպանելու ժամանակ), կամ հրդեհի զարգացման և մարման ժամանակի ողջ ընթացքում (հրդեհանվտանգ գոտիներում մարդկանց պաշտպանելու դեպքում)։

86. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող հակածխային Էկրանները (գալարավարագույրներ, վարագույրներ) պետք է սարքավորված լինեն ավտոմատ կառավարվող և հեռակառավարվող շարժաբերներով (առանց ջերմատարրերի) և պատրաստված լինեն չայրվող հիմք ունեցող նյութերից՝ ծխաշերտի հրդեհի ժամանակ ձևավորվող տարածման սահմանափակումն ապահովող քաթանի արձակման աշխատանքային երկարությամբ։

87. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցների պարամետրերի (այդ թվում՝ հրակայունության և ծխագազաթափանցմանը դիմադրելու սահմանների) փաստացի արժեքները պետք է սահմանվեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու և կատարելու և հրդեհային անվտանգության ապահովման ու հրդեհաշիջման միջոցների համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները պարունակող ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներին համապատասխան անցկացրած փորձարկումների (չափումների) արդյունքում։

88. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների ու փաթեթվածքի վրա պետք է զետեղվի մականշվածք, որը պարունակում է անվանման, տիպի (տեսակի), մակնիշի, մոդելի, նշանակության,

հիմնական տեխնիկական պարամետրերի և բնութագրերի մասին տեղեկատվություն, արտադրողի ապրանքային նշանը և (կամ) անվանումը, ինչպես նաև արտադրող երկրի մասին տեղեկատվությունը:

89. Մականշվածքը պետք է զետեղվի ռուսերենով և, անդամ պետությունների օրենսդրության մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում, այն անդամ պետության պետական լեզվով (լեզուներով), որի տարածքում իրացվում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցը: Անհրաժեշտության դեպքում թույլատրվում է զետեղել այլ լեզուներով լրացուցիչ մականշվածք՝ տեքստին բովանդակության նույնական լինելու պայմանով:

90. Եթե մականշվածքը հնարավոր չէ զետեղել անմիջականորեն հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի վրա, ապա մականշվածքը պետք է զետեղվի փաթեթվածքի վրա և ներառվի տեխնիկական փաստաթղթերում: Արտադրողն ինքնուրույն է սահմանում հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի վրա մականշվածք զետեղելու հնարավորությունը կամ անհնարինությունը:

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցի մականշվածքը պետք է լինի պարզ, դյուրընթեռնելի և զետեղված լինի այն տեսնելու համար հասանելի տեղում:

VI. Անվտանգության պահանջներին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության ապահովումը

91. Սույն Տեխնիկական կանոնակարգին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունն ապահովվում է սույն Կանոնակարգի և Միության (Մաքսային միության) ուժի մեջ մտած այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա՝ անմիջականորեն կամ այն ստանդարտների կատարմամբ, որոնք ներառված են այն ստանդարտների ցանկում, որոնց կամավոր կիրառման արդյունքում ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

92. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման

միջոցների հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների մեթոդները սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու և կատարելու և հրդեհային անվտանգության ապահովման ու հրդեհաշիջման միջոցների համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները պարունակող ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում:

VII. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության գնահատումը

93. Նախքան սույն Տեխնիկական կանոնակարգի հավելվածում նշված հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցներն անդամ պետությունների տարածքում շրջանառության մեջ դնելը՝ դրանք ենթակա են գնահատման՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասով:

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության գնահատումը կատարվում է սերտիֆիկացման (1ս, 3ս և 4ս ընթացակարգեր) կամ համապատասխանության հայտարարագրման (3հ, 4հ և 6հ ընթացակարգեր) ձևով:

94. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող են լինել անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր հանդես եկող ֆիզիկական անձը, որը արտադրող կամ վաճառող, կամ արտադրողի կողմից լիազորված անձ է:

95. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացումն անցկացվում է սերտիֆիկացման մարմնի կողմից:

96. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումները սերտիֆիկացման նպատակներով անցկացվում է Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ներառված հավատարմագրված լաբորատորիաների (կենտրոնների) կողմից (այսուհետ՝ փորձարկման

լաբորատորիա (կենտրոն)):

97. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացման դեպքում հայտատու կարող է լինել՝

ա) 1ս ընթացակարգի համար՝ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը).

բ) 3ս և 4ս ընթացակարգերի համար՝ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը) կամ վաճառողը:

98. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացում անցկացնելու դեպքում (1ս, 3ս և 4ս ընթացակարգեր) հայտատուն՝

ա) սերտիֆիկացման մարմին է ներկայացնում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է՝

տեխնիկական պայմանները (նկարագրություն).

տեխնիկական փաստաթղթերը (կոնստրուկտորական, և (կամ) տեխնոլոգիական, և (կամ) շահագործման փաստաթղթեր) (առկայության դեպքում).

այն միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը (դրանց կիրառման դեպքում).

վնաս պատճառելու և (կամ) վնասներ հասցնելու հնարավորության հետ կապված ռիսկի վերլուծությամբ հիմնավորված՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը հիմնավորող տեխնիկական որոշումների նկարագրությունը (եթե այն ստանդարտները, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը, բացակայում են կամ չեն կիրառվել).

պայմանագիրը (մատակարարման պայմանագիրը) և ապրանքաուղեկից

փաստաթղթերը (3ս և 4ս ընթացակարգեր).

արտադրողի, այդ թվում՝ օտարերկրյա արտադրողի հետ կնքված պայմանագրի պատճենը, որով նախատեսվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին առաքվող հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության ապահովումը և նշված պահանջներին անդամ պետությունների տարածքներ մատակարարվող հրդեհային անվտանգության ապահովման ու հրդեհաշիջման միջոցների անհամապատասխանության համար պատասխանատվությունը (արտադրողի կողմից լիազորված մարմնի համար) (1ս ընթացակարգ).

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նյութերի, համալրող տարրերի կամ բաղկացուցիչ մասերի համապատասխանությունը հավաստելու մասին փաստաթղթերը (առկայության դեպքում).

հայտատուի ընտրությամբ այլ փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսացել սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հավաստման համար (առկայության դեպքում).

բ) ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության գործընթացը լինի կայուն և ապահովի պատրաստվող հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին.

գ) սերտիֆիկացման ձևով համապատասխանության հավաստման ընթացակարգն ավարտվելուց հետո հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների վրա գետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

դ) սերտիֆիկացման ձևով համապատասխանության հավաստման ընթացակարգն ավարտվելուց հետո կազմում է փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է սույն կետի «ա» ենթակետով նախատեսված փաստաթղթերը, փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացրած հետազոտությունների (փորձարկումների) արձանագրությունը

(արձանագրությունները), համապատասխանության սերտիֆիկատը:

99. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացման դեպքում սերտիֆիկացման մարմինը՝

ա) անցկացնում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման հայտագրված միջոցների նույնականացումը.

բ) կատարում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նմուշառում.

գ) կազմակերպում է սույն Տեխնիկական կանոնակարգի 91-րդ կետում նշված ստանդարտների պահանջներին, կամ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը հավաստող որոշումներին համապատասխանության մասով հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նմուշի (նմուշների) փորձարկումների անցկացումը, եթե չեն կիրառվել ստանդարտների ցանկից այն ստանդարտները, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը.

դ) անցկացնում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումների արձանագրության (արձանագրությունների) վերլուծությունը.

ե) անցկացնում է վնաս պատճառելու և (կամ) վնասներ հասցնելու հնարավորության հետ կապված ռիսկի վերլուծությամբ հիմնավորված՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը հիմնավորող տեխնիկական որոշումների վերլուծությունը (եթե այն ստանդարտները, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը՝ բացակայում են կամ չեն կիրառվել).

զ) անցկացնում է արտադրողի մոտ արտադրության վիճակի վերլուծությունը (ընթացակարգ 1ս).

է) հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների սերտիֆիկացման անցկացման դրական արդյունքների դեպքում ձևակերպում և տրամադրում է համապատասխանության սերտիֆիկատ, իսկ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների

սերտիֆիկացման անցկացման բացասական արդյունքների դեպքում՝ համապատասխանության սերտիֆիկատի տրամադրումը մերժելու հիմնավորված որոշում է կայացնում:

100. Տրված համապատասխանության սերտիֆիկատի վերաբերյալ տեղեկությունները սերտիֆիկացման մարմնի կողմից գրանցվում են տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրում:

101. Սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է 5 տարի: Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի (եզակի արտադրատեսակի) համար համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետ չի սահմանվում:

102. Սույն Տեխնիկական կանոնակարգի 98-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերի փաթեթը, փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված փորձարկումների արձանագրությունները պետք է պահպանվեն հայտատուի մոտ և սերտիֆիկացման մարմնում հետևյալ ժամկետի ընթացքում՝

ա) սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար՝ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը դադարեցնելու օրվանից առնվազն 10 տարի:

բ) հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի (եզակի արտադրատեսակի) համար՝ խմբաքանակից վերջին արտադրատեսակի իրացման օրվանից առնվազն 10 տարի:

103. Սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացված արտադրանքի նկատմամբ անցկացնում է տեսչական հսկողություն՝ փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) նմուշների փորձարկումների և (կամ) արտադրության վիճակի վերլուծության միջոցով (1ա ընթացակարգ):

104. Հայտատուն պարտավոր է տեղեկացնել համապատասխանության սերտիֆիկատը տրամադրած սերտիֆիկացման մարմնին՝ տրված սերտիֆիկատի գործողության ընթացքում հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների կառուցվածքներում (կազմում) կամ դրանց

արտադրման տեխնոլոգիայում կատարված փոփոխությունների մասին:

Սերտիֆիկացման մարմինն անցկացնում է հայտատուի կողմից ներկայացրած փաստաթղթերի վերլուծություն և որոշում է ընդունում այլ փորձարկումներ և (կամ) արտադրության վիճակի վերլուծություն անցկացնելու մասին:

105. Սույն Տեխնիկական կանոնակարգի 98-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերը պետք է տրամադրվեն պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին՝ նրանց պահանջով:

106. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրման դեպքում հայտատու կարող են լինել անդամ պետության տարածքում՝ դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր հանդես եկող ֆիզիկական անձը, որը արտադրող կամ վաճառող, կամ արտադրողի կողմից լիազորված անձ է:

107. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրման ընթացակարգի ընտրությունն իրականացվում է հայտատուի կողմից:

108. 3h, 4h և 6h ընթացակարգերով հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրումը կատարվում է հայտատուի կողմից՝ սեփական ապացույցների և փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ստացված ապացույցների հիման վրա:

109. Արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), վաճառողի որոշմամբ համապատասխանության հայտարարագրման ձևով սույն Տեխնիկական կանոնակարգին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հավաստումը կարող է փոխարինվել սերտիֆիկացման ձևով համապատասխանության հավաստումով՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 98-րդ կետին համապատասխան:

110. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրումը (3h, 4h և 6h ընթացակարգեր) իրականացվում է՝

ա) հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումներ անցկացնելու միջոցով (հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի կամ եզակի արտադրատեսակի համար) (4հ ընթացակարգ)։

բ) հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումներ անցկացնելու և արտադրողի կողմից արտադրական հսկողություն իրականացնելու միջոցով (սերիական արտադրության հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (3հ ընթացակարգ)։

գ) հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումներ անցկացնելու, հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների արտադրության կառավարման համակարգի սերտիֆիկացման, արտադրողի կողմից արտադրական հսկողություն իրականացնելու միջոցով (սերիական արտադրության հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (6հ ընթացակարգ)։

111. Սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) կողմից (3հ և 6հ ընթացակարգ)։

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրումը (հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի կամ եզակի արտադրատեսակի համար) իրականացվում է արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), վաճառողի կողմից (4հ ընթացակարգ)։

112. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանության հայտարարագրման դեպքում (3հ, 4հ և 6հ ընթացակարգեր)՝

ա) արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), վաճառողը՝

կազմում և վերլուծում է այն փաստաթղթերը, որոնք հավաստում են սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հրդեհային անվտանգության

ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունը, այդ թվում՝ տեխնիկական պայմանները (նկարագրությունը).

տեխնիկական փաստաթղթերը (կոնստրուկտորական, և (կամ) տեխնոլոգիական, և (կամ) շահագործման փաստաթղթերը) (առկայության դեպքում).

այն միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը (դրանց կիրառման դեպքում).

վնաս պատճառելու և (կամ) կորուստներ հասցնելու հնարավորության հետ կապված ռիսկի վերլուծությամբ հիմնավորված՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը հիմնավորող տեխնիկական որոշումների նկարագրությունը (եթե այն ստանդարտները, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմունքներով ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը, բացակայում են կամ չեն կիրառվել).

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների նյութերի, համալրող տարրերի կամ բաղկացուցիչ մասերի համապատասխանությունը հավաստելու մասին փաստաթղթերը (առկայության դեպքում).

պայմանագիրը (մատակարարման պայմանագիրը) և ապրանքաուղեկից փաստաթղթերը (հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի կամ եզակի արտադրատեսակի համար) (4h ընթացակարգ).

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների փորձարկումների արձանագրությունը (3h, 4h և 6h ընթացակարգեր).

արտադրողի արտադրական հսկողության արձանագրությունը (ակտը) (սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (3h ընթացակարգ).

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների

արտադրության վրա տարածվող՝ կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատը (սերտիֆիկատի պատճենը), որը հավաստում է սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրողի կառավարման համակարգի համապատասխանությունը (սերիական արտադրության հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (6h ընթացակարգ)։

արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), վաճառողի ընտրությամբ՝ այլ փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսացել սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև Միության (Մաքսային միության) այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունը հավաստելու համար (առկայության դեպքում)։

բ) արտադրողը՝

արտադրական հսկողություն է իրականացնում և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկում, որպեսզի արտադրական գործընթացով ապահովվի հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին (սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (3h և 6h ընթացակարգեր)։ Արտադրության և հսկողության գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև դրանց հսկողության արդյունքները պետք է ձևակերպված լինեն փաստաթղթերով (արտադրողի կողմից սահմանված ձևով),

անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի արտադրության գործընթացը և հրդեհային անվտանգության ապահովման ու հրդեհաշիջման միջոցների արտադրության կառավարման համակարգի կայուն գործունեությամբ ապահովվեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանությունը (սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար) (6h ընթացակարգ)։

գ) արտադրողը (արտադրողը կողմից լիազորված անձը), վաճառողը հայտարարագիր են ընդունում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հրդեհային անվտանգության և հրդեհաշիջման ապահովման միջոցների համապատասխանության վերաբերյալ, որը կազմված է ըստ Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշմամբ հաստատված միասնական ձևի, և դրա գրանցումից հետո գետեղում են Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը:

113. Համապատասխանության հայտարարագիրը ենթակա է գրանցման Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

114. Համապատասխանության հայտարարագրի գործողությունն սկսվում է տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրում դրա գրանցման ամսաթվից:

115. Սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի: Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի (եզակի արտադրատեսակի) համար համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետ չի սահմանվում:

116. Հայտատուն պարտավոր է պահպանել համապատասխանության հայտարարագիրը և սույն Տեխնիկական կանոնակարգի 112 կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերի փաթեթը՝

սերիական թողարկման հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների համար՝ համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետն ավարտվելու ամսաթվից սկսած 10 տարվա ընթացքում:

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների խմբաքանակի (եզակի արտադրատեսակի) համար՝ խմբաքանակից վերջին արտադրատեսակի (եզակի արտադրատեսակի) իրացման օրվանից առնվազն 10 տարի:

117. Սույն Տեխնիկական կանոնակարգի 112-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերի փաթեթը տրամադրվում է պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին՝ նրանց պահանջով:

VIII. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական
նշանով հրդեհային անվտանգության ապահովման
և հրդեհաշիջման միջոցները մակնշելը

118. Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման այն միջոցները, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաև դրանց վրա տարածվող՝ Միության (Մաքսային միության) ուժի մեջ մտած այլ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, և որոնք անցել են համապատասխանության գնահատում՝ համաձայն սույն Տեխնիկական կանոնակարգի VII բաժնի, մակնշվում են Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցները մակնշվում են Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով՝ մինչև դրանք այդ շուկայում շրջանառության մեջ դնելը:

119. Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների յուրաքանչյուր միավորի վրա՝ հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում հստակ և պարզ պատկեր ապահովող ցանկացած եղանակով, ինչպես նաև տեխնիկական փաստաթղթերի ու փաթեթվածքի վրա:

120. Եթե հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների առանձնահատկությունների պատճառով Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը հնարավոր չէ զետեղել անմիջապես դրանց վրա, ապա թույլատրվում Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղել միայն փաթեթվածքի և տեխնիկական փաստաթղթերի վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Հրդեհային անվտանգության ապահովման և
հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող
պահանջների մասին» Եվրասիական տնտեսական
միության տեխնիկական կանոնակարգի
(ԵԱՏՄ ՏԿ 043/2017)

Ց Ա Ն Կ

հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման այն
միջոցների, որոնց վրա տարածվում են «Հրդեհային անվտանգության
ապահովման և հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների
մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական
կանոնակարգի պահանջները (ԵԱՏՄ ՏԿ 043/2017)

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
I. Կրակմարիչ նյութեր	
1. Ընդհանուր նշանակության կրակմարիչ փոշիներ	1ս, 3ս, 4ս
2. Հրդեհների մարման փրփրարարներ	1ս, 3ս, 4ս
3. Ջրալույծ այրվող հեղուկների հրդեհների մարման համար վերևից մատուցմամբ փրփրարարներ	1ս, 3ս, 4ս
4. Թրջիչներ	3հ, 4հ, 6հ
5. Գազային կրակմարիչ նյութեր	3հ, 4հ, 6հ
II. Հրապաշտպանության միջոցներ	
6. Փայտանյութի և դրա հիմքով նյութերի հրապաշտպանության միջոցներ	1ս, 3ս, 4ս
7. Մետաղյա և (կամ) երկաթբետոնե կառուցվածքների հրապաշտպանության միջոցներ	1ս, 3ս, 4ս

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
8. Մալուխների հրապաշտականության միջոցներ	1ս, 3ս, 4ս
III. Էլեկտրամոնտաժային գծամետրային արտադրատեսակներ	
9. Ոչ մետաղյա նյութերից էլեկտրամոնտաժային գծամետրային արտադրատեսակներ	1ս, 3ս, 4ս
IV. Կրակմարիչներ	
10. Փոխադրելի կրակմարիչներ	1ս, 3ս, 4ս
11. Շարժական կրակմարիչներ	1ս, 3ս, 4ս
V. Հրդեհաշիջման ավտոնոմ սարքեր	
12. Հրդեհաշիջման ավտոնոմ սարքեր	1ս, 3ս, 4ս
VI. Հրշեջ պահարաններ, հրշեջ ծորակներ	
13. Հրշեջ պահարաններ	3հ, 4հ, 6հ
14. Հրշեջ ծորակներ, հրշեջ փակիչ կափույրներ	3հ, 4հ, 6հ
VII. Հրդեհաշիջման շարժական միջոցները	
15. Հիմնական հրշեջ մեքենաներ	3հ, 4հ, 6հ
16. Շտաբային հրշեջ մեքենաներ	3հ, 4հ, 6հ
17. Հրշեջ ավտոամբարձիչներ	3հ, 4հ, 6հ
18. Հրշեջ ավտոսանդուղքներ	3հ, 4հ, 6հ
19. Վթարափրկարարական ավտոմեքենաներ	3հ, 4հ, 6հ
20. Հրշեջ ավտոփրփրամբարձիչներ	3հ, 4հ, 6հ
21. Կապի և լուսավորության մեքենաներ	3հ, 4հ, 6հ
22. Գազաձխապաշտականության ծառայության մեքենաներ	3հ, 4հ, 6հ
23. Շարժական ռոբոտատեխնիկական համալիրներ	3հ, 4հ, 6հ
24. Հրշեջ շարժիչապոմպեր	3հ, 4հ, 6հ

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
25. Կենտրոնախույս հրշեջ պոմպեր շարժական հրդեհաշիջման միջոցների համար	3h, 4h, 6h
VIII. Հրդեհային ավտոմատիկայի համակարգի (հրշեջ ազդանշանման համակարգերի, հրդեհի մասին ծանուցումների փոխանցման համակարգերի, հրդեհի դեպքում տեղեկացման և մարդկանց տարահանման կառավարման համակարգերի) կազմում գործող տեխնիկական միջոցներ	
26. Հրշեջ ազդարարներ, ձեռքի հրշեջ ազդարարներ	1ս, 3ս, 4ս
27. Հրշեջ ավտոմատիկայի համակարգերի տեխնիկական միջոցների անխափան սնուցման աղբյուրներ	1ս, 3ս, 4ս
28. Հրշեջ ազդարարներ	1ս, 3ս, 4ս
29. Ընդունիչ-վերահսկող ու կառավարման հրշեջ սարքեր և այլ գործիքներ, որոնք նախատեսված են սարքի գործառնական հնարավորություններն ընդլայնելու համար	1ս, 3ս, 4ս
30. Ցուցանշման դուրս բերվող սարքեր	1ս, 3ս, 4ս
31. Շլեյֆի աշխատունակության ստուգման և հսկման սարքեր	1ս, 3ս, 4ս
32. Հրդեհի մասին ծանուցումների փոխանցման համակարգեր	1ս, 3ս, 4ս
33. Անհատական հրշեջ ազդարարներ	1ս, 3ս, 4ս
34. Հեռակառավարվող գործարկման սարքեր	1ս, 3ս, 4ս
IX. Հրդեհաշիջման ավտոմատ կայանքների (այդ թվում՝ հրդեհաշիջման ավտոնոմ կայանքների, հրդեհաշիջման ռոբոտացված կայանքների, հրշեջ մոդուլային կայանքների) կազմում գործող տեխնիկական միջոցներ	
35. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ	1ս, 3ս, 4ս

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
կայանքների կառավարման հանգույցներ	
36. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների ցայտաջրմուղ և դրենչերային ազդանշանային կափույրներ	3h, 4h, 6h
37. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների դրենաժային կափույրներ	3h, 4h, 6h
38. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների հակադարձ կափույրներ	1u, 3u, 4u
39. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների սողնակներ, փականակներ	1u, 3u, 4u
40. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների ծորակներ	3h, 4h, 6h
41. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների օդածծիչներ	3h, 4h, 6h
42. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների աքսելերատորներ	3h, 4h, 6h
43. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների հիդրոարագարարներ	3h, 4h, 6h
44. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային կայանքների ճնշման ազդանշանիչներ և հեղուկի հոսքի ազդանշանիչներ	1u, 3u, 4u
45. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների կոմպենսատորներ	3h, 4h, 6h
46. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ կայանքների հապաղման խցեր	3h, 4h, 6h
47. Հրդեհաշիջման ջրային և փրփուրային ավտոմատ	3h, 4h, 6h

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
կայանքների գտիչներ	
48. Հրշեջ հիդրավլիկ ձայնային ազդարարներ	3h, 4h, 6h
49. Ցայտաջրմուղ և դրենչերային ջրային ու փրփրային ոռոգիչներ	1u, 3u, 4u
50. Փրփուրային հրդեհաշիջման կայանքների բաժնավորիչներ	1u, 3u, 4u
51. Նրբափոշիացված ջրով հրդեհաշիջման ավտոմատ կայանքների մոդուլներ	1u, 3u, 4u
52. Գազային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների մոդուլներ	1u, 3u, 4u
53. Գազափոշային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների մոդուլներ	1u, 3u, 4u
54. Փոշիով հրդեհաշիջման ավտոմատ կայանքների մոդուլներ	1u, 3u, 4u
55. Գազային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների բաշխիչ սարքեր	1u, 3u, 4u
56. Գազային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների իզոթերմ ռեգերվուարներ	3h, 4h, 6h
57. Կրակմարիչ անբոցողի գեներատորներ	1u, 3u, 4u
X. Հրդեհաշիջման ռոբոտացված կայանքներ	
58. Հրդեհաշիջման ռոբոտացված կայանքներ	1u, 3u, 4u
XI. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցներ	
59. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատներ (սեղմված օդով, սեղմված թթվածնով)	1u, 3u, 4u

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
60. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության գոտի հրշեջ միջոցներ	1ս, 3ս, 4ս
61. Հրշեջ մեկուսիչ ինքնափրկարարներ	1ս, 3ս, 4ս
62. Շնչառական և տեսողական օրգանների անհատական պաշտպանության հրշեջ միջոցների երեսակողմի մասեր	1ս, 3ս, 4ս
63. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների և հրշեջ մեկուսիչ ինքնափրկարարների բալոններ	1ս, 3ս, 4ս
64. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների ստուգման կայանքներ	1ս, 3ս, 4ս
65. Շնչառական մեկուսիչ հրշեջ ապարատների բալոնների լիցքավորման կոմպրեսորային կայանքներ	1ս, 3ս, 4ս
XII. Հրշեջի հատուկ պաշտպանական հագուստ	
66. Հրշեջի ընդհանուր նշանակության հատուկ պաշտպանական հագուստ	1ս, 3ս, 4ս
67. Հրշեջի՝ բարձր ջերմային ներգործությունից պաշտպանող հատուկ պաշտպանական հագուստ	1ս, 3ս, 4ս
68. Հրշեջի մեկուսիչ տիպի հատուկ պաշտպանական հագուստ	1ս, 3ս, 4ս
69. Հրշեջների համար ջերմակայուն ներքնազգեստ	1ս, 3ս, 4ս
70. Հրշեջների համար ենթասաղավարտ	1ս, 3ս, 4ս
XIII. Հրշեջի ձեռքերի, ոտքերի և գլխի անհատական պաշտպանության միջոցները	
71. Հրշեջի ձեռքերի անհատական պաշտպանության միջոցներ	1ս, 3ս, 4ս

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
72. Հրշեջի ուղքերի անհատական պաշտպանության միջոցներ	1ս, 3ս, 4ս
73. Գլխի անհատական պաշտպանության միջոցներ (սաղավարտներ պաշտպանական)	1ս, 3ս, 4ս
XIV. Հրդեհի դեպքում բարձրադիր մակարդակներից մարդկանց փրկելու միջոցներ	
74. Ձեռքի հրշեջ սանդուղքներ	1ս, 3ս, 4ս
75. Հրշեջ փրկարար պարաններ	3հ, 4հ, 6հ
76. Հրշեջ փրկարար գոտիներ	3հ, 4հ, 6հ
77. Հրշեջ զսպանակեռիկներ	3հ, 4հ, 6հ
78. Հրշեջ փրկարար ելարաններ	1ս, 3ս, 4ս
79. Հրշեջ փրկարար թռիչքային սարքեր	1ս, 3ս, 4ս
80. Հրշեջ փրկարարական ճկափողեր	3հ, 4հ, 6հ
81. Ճոպանային իջեցման հրշեջ սարքեր	1ս, 3ս, 4ս
82. Փրկարարական կախովի հրշեջ սանդուղքներ	3հ, 4հ, 6հ
XV. Հրդեհների դեպքում հատուկ փրկարարական աշխատանքներ անցկացնելու գործիք	
83. Հրդեհների դեպքում հատուկ փրկարարական աշխատանքներ անցկացնելու գործիք	3հ, 4հ, 6հ
XVI. Հրշեջների լրացուցիչ հանդերձանք	
84. Հրշեջ լապտերներ, ջերմացույցներ, ռադիոփարոսներ, ձայնային փարոսներ	3հ, 4հ, 6հ
XVII. Հրշեջ սարքավորում	
85. Միացման հրշեջ գլխիկներ	3հ, 4հ, 6հ

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
86. Հրշեջ ջրածորաններ	3h, 4h, 6h
87. Հրշեջ սյունակ	3h, 4h, 6h
88. Փրփրախառնիչներ	3h, 4h, 6h
89. Փողրակային ջրահավաքիչներ	3h, 4h, 6h
90. Փողրակային ճյուղավորումներ	3h, 4h, 6h
91. Հրշեջ ջրամբարծիչներ	3h, 4h, 6h
92. Ներծծող հրշեջ ցանցեր	3h, 4h, 6h
93. Ճնշումային հրշեջ ճկափողեր	1u, 3u, 4u
94. Ճնշումային հրշեջ ճկափողերի սպասարկման սարքավորում	3h, 4h, 6h
95. Ձեռքի հրշեջ ծայրապնակներ	1u, 3u, 4u
96. Հրետասայլային հրշեջ ծայրապնակներ	1u, 3u, 4u
97. Փրփուրի գեներատորներ	1u, 3u, 4u
XVIII. Հակահրդեհային արգելքների որմանցքերի լրացում	
98. Հակահրդեհային պատուհաններ, դռներ, հրակայունության նորմավորված սահմաններով վերելակների հորանների դռներ, դարպասներ, մտոցներ, գալարավարագույրներ, ռոլետներ, էկրաններ, վարագույրներ	1u, 3u, 4u
99. Շենքերի և շինությունների ինժեներային համակարգերի մալուխային արտադրատեսակների, շինալարերի, հերմետիկ մալուխային ներանցիչների, կցորդիչների և խողովակաշարերի հետ հակահրդեհային արգելքների հատման հանգույցներ	1u, 3u, 4u
100. Ծխագազաանթափանց հակահրդեհային դռներ,	1u, 3u, 4u

Հրդեհային անվտանգության ապահովման և հրդեհաշիջման միջոցների անվանումը	Համապատասխանության հավաստման ընթացակարգերը
ծխանթափանց դռներ	
XIX. Հակածխային օդափոխության համակարգերի կազմում գործող տեխնիկական միջոցներ	
101. Նորմալ բացված հակահրդեհային կափույրներ, նորմալ փակված հակահրդեհային կափույրներ, ծխային ելանցքներ	1ս, 3ս, 4ս
102. Հակածխային էկրաններ (գալարավարագույրներ, վարագույրներ)	1ս, 3ս, 4ս
103. Օդաքաշ օդափոխիչներ	1ս, 3ս, 4ս
104. Օդատարներ	1ս, 3ս, 4ս